



## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

### Հ Ր Ա Մ Ա Ն

«28» «դեկտեմբեր» 2023 թ. № 488-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 172-Լ  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ  
ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով «Էկոպարեկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի «Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 172-Լ հրամանի (այսուհետ՝ հրաման) վերնագրում և ամբողջ տեքստում «անտառային կոմիտե» բառերի հոլովածները փոխարինել «Էկոպարեկային ծառայություն» բառերի համապատասխան հոլովածներով,
2. շրջակա միջավայրի նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի N 172-Լ հրամանով հաստատված Էկոպարեկային ծառայության կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունը և կառուցվածքային փոփոխությունները.
  - 1) իրավաբանական վարչությունն անվանափոխել իրավական ապահովման և վարչական վարույթի վարչության,
  - 2) տնտեսական բաժինը վերակազմավորել վարչատնտեսական և նյութատեխնիկական ապահովման վարչության,
  - 3) անտառների և անտառային հողերի կառավարման վարչության գործունեությունը դադարեցնել,
  - 4) անտառների հաշվառման և կադաստրի վարման վարչության գործունեությունը դադարեցնել,
  - 5) պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հսկողության վարչության գործունեությունը դադարեցնել,
  - 6) արտաքին կապերի բաժնի գործունեությունը դադարեցնել,
  - 7) ստեղծել ներքին անվտանգության վարչություն,

- 8) ստեղծել բուսական և կենդանական աշխարհին պատճառված վնասի հաշվարկի և վերլուծության վարչություն,
- 9) ստեղծել անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների ռիսկերի կառավարման վարչություն,
- 10) ստեղծել ծրագրերի ապահովման բաժին,
- 11) ստեղծել տեղեկատվական համակարգերի բաժին,
- 12) ստեղծել տարածքային հետևյալ ստորաբաժանումները.

ա. ՀՀ Լոռու մարզային վարչություն,

բ. ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզային վարչություն,

գ. ՀՀ Սյունիքի մարզային վարչություն,

դ. ՀՀ Ծիրակի և Արագածոտնի մարզային վարչություն,

ե. ՀՀ Տավուշի մարզային վարչություն,

զ. ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչություն,

է. Երևան քաղաքի և ՀՀ Արմավիրի մարզային վարչություն:

3. Հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ին:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

12/28/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

28 06/2023թ.  
ք. Երևան